

Մայրենի Տարբերակ 2

Մի թագավոր բարեխիղճ, արդարամիտ ու շենացնող էր: Ծաղկեցրել էր իր թագավորությունը: Եվ ահա ծերացել էր ու մտածում էր, թե որդիներից որին դարձնի թագաժառանգ, որպեսզի տերությունը ծաղկուն մնա իր մահից հետո: Կանչեց իր որդիներին, վերցրեց զանազան ծաղիկների սերմեր և **(բաժանել)** նրանց:

- Որդիներ՝ րս,- ասաց ծեր թագավորը,- հողե՛ր ընտրեք ձեզ համար, մշակե՛ք, պարտեզներ՝ շինեք, առե՛ք այս սերմերն ու ցանե՛ք, խնամե՛ք, աճեցրե՛ք ծաղիկներ: Ում պարտեզը ճոխ լինի, հողը՝ խնամված, ում ծաղիկներն ավելի գեղեցիկ լինեն, նա էլ **(լինել)** տերությանս թագավորն իմ մահից հետո: Այդպես եմ որոշելու, թե ով է ձեզնից առավել ազնիվը, բարեխիղճն ու աշխատասերը: Որդիները վերցրին սերմերն ու գնացին:

Գարնանը թագավորը պալատականների ու ժողովրդի մեծ բազմությամբ գնաց պարտեզները նայելու: Մոտեցավ ավագ որդու պարտեզին: Ի՛նչ պարտեզ, իսկական դրախտ. ամեն գույնի, ամեն բուրմունքի ծաղիկները ծով էին կապել պարտեզում:

- Այս ծաղիկներն իմ տված սերմերի՞ց աճեցին,- հարցրեց թագավորը:

- Այո՛, հա՛յր իմ,- ասաց որդին:

Թագավորը մոայլվեց ու անխոս առաջ գնաց: Ամենքը զարմացան ու լուռ գնացին նրա հետ:

Մյուս որդու պարտեզն առավել ճոխ էր, հողը մշակված էր մեծագույն ջանասիրությամբ: Ծաղիկներն այնքա՛ն փարթամ էին...

- Այս ծաղիկներն իմ տված սերմերի՞ց աճեցրիր,- հարցրեց թագավորը:

Ստանալով նույն պատասխանը՝ թագավորն առավել ևս մոայլվեց ու գնաց առաջ:

Ահա մյուս պարտեզը: Ի՛նչ պարտեզ... Երփներանգ ծաղիկներից օդն անգամ ներկվել էր գույնզգույն: Հայրը այս որդուն ևս նույն հարցը տվեց և նույն պատասխանը ստանալով՝ կրկին մոայլվեց:

Հասան կրտսեր որդու պարտեզին: Բոլորը կարկամելով՝ քարացած կանգ առան: Մշակված, խնամված հողամասում կանգնել էր կրտսեր որդին, իսկ պարտեզում ոչինչ չկար, ո՛չ ծաղիկ, ո՛չ անգամ մոլախոտ: Մերկ հողն էր:

- Ո՞ւր են ծաղիկներդ, որդի՛:

- Հա՛յր, որքան ջանք արի, որքան քրտինք թափեցի, օր ու գիշեր ոռոգեցի, խնամեցի այս հողը, բայց քո տված սերմերից ոչ մեկը **(չծլել)**, իմ պարտեզն այսպես ամայի մնաց:

Հայրն ուրախացած առաջ նետվեց, գրկեց, համբուրեց կրտսեր որդու ճակատը:

- Ապրե՛ս, դու ազնիվ, շիտակ ու աշխատասեր մարդ ես: Քո ավագ եղբայրներն անազնիվ ու խաբեբա գտնվեցին, որովհետև այդ սերմերից ոչինչ ծլել չէր կարող: Դու միակն ես, որ ուրիշ տեղերից սերմեր չցանեցիր քո պարտեզում: Ես քեզ եմ ընտրում թագավորությանս ժառանգ: Դու արդարությամբ ու շիտակությամբ կղեկավարես տերությանս ժողովրդին:

Ժողովուրդը զարմացած հիացավ ու գովեց իր տիրակալին: Իսկ օտար դեսպանները տարան այս զրույցը և հեռու երկրներում **(տարածել)** իմաստուն թագավորի համբավը:

1. Նշիր երկու բան, որոնցով նկարագրվում է թագավորը:

Պատասխան՝ _____

2. Ինչպե՞ս էր ձեր թագավորը իրեն թագածառանգ ընտրելու:

1) Ընտրելու էր որդիներից ավագին, քանի որ այդպիսին էր կարգը:

2) Ընտրությունների միջոցով ընտրվելու էր ժողովրդի կողմից, քանի որ այս թագավորը շատ ժողովրդավար էր:

3) Լսելու էր խորհրդականների առաջարկները:

4) Ում պարտեզը ճոխ լիներ, ում ծաղիկներն ավելի գեղեցիկ լինեին, նա էլ կլիներ տերության թագավորն իր մահից հետո:

3. Ուշադիր կարդա՝ տեքստի երկխոսությունները և պատասխանի՛ր տրված հարցերին:

ա. Թագավորի միևնույն հարցին ի՞նչ պատասխանեցին առաջին երեք որդիները:

1) Հարևան պարտիզպանից են վերցրել սերմերը:

2) Խանութից են գնել սերմերը:

3) Հոր տված սերմերն են տնկել:

4) Ծաղիկներն իրենք իրենց են աճել:

բ. Թագավորն ինչո՞ւ էր առաջին երեք որդիների պատասխանից տխրում ու հեռանում:

Պատասխան՝ _____

4. Ինչպիսի՞ն էր կրտսեր որդու այգին:

Պատասխան՝ _____

5. ա. Ինչո՞ւ կրտսեր որդու պատասխանը ուրախացրեց թագավորին:

Պատասխան՝ _____

բ. Ինչո՞ւ ժողովուրդը զարմացավ, հիացավ ու գովեց իր տիրակալին:

Պատասխան՝ _____

6. Փակագծերում դրված բայերը տարբերակներում ներկայացված են որոշակի դեմքով, թվով և ժամանակով: Ըստ տեքստի՝ ո՞ր տարբերակի բայի ձևն է սխալ:

1) *բաժանել*-բաժանեց

3) *չծլել* - չծլեց

2) *լինել* - կլինի

4) *տարածել* - տարածում ենք

7. Տեքստից դո՛ւրս գրիր մեկ բացականչական նախադասություն:

Պատասխան՝ _____

8. Տրված բառակապակցությունների ընդգծված բառերում բաց թողնված տառի կամ տառակապակցության տեղում դատարկ է: Արտագրի՛ր ընդգծված բառերը՝ լրացնելով բաց թողած տառը կամ տառակապակցությունը:

տաք միջ_րե, անհամ_եր տղա, անհասանելի բար_ունք, խաղողի _ղկույզ

Պատասխան՝ _____, _____, _____, _____

9. Դո՛ւրս գրիր տրված նախադասության ենթական:

Անտառը նմանվում է մի նախշագարդ գորգի:

Պատասխան՝ _____

10. Տրված նախադասության մեջ բաց է թողնված մեկ կետադրական նշան: Արտագրի՛ր այդ նախադասությունը և դի՛ր բաց թողնված կետադրական նշանը:

Անընդհատ անձրև էր գալիս բայց դաշտերում դեռ արևագույն խոտ կար:

Պատասխան՝ _____

11. Ո՞ր բառի իմաստն է՝ *ձեռքով շինած, ստեղծած*:

- 1) ձեռագիր 2) ձեռնբաց 3) ձեռակերտ 4) անձեռակերտ

12. Տրված բառերից ո՞րի դիմաց է սխալ նշված նրա տեսակը՝ ըստ կազմության:

- 1) *ծաղկազարդ* – հոդակապով բարդ բառ 2) *գրիչ* – վերջածանցավոր բառ
3) *գուգրնկեր* – անհոդակապ բարդ բառ 4) *ծաղիկ* – ածանցավոր բառ

13. Տրված բառերից յուրաքանչյուրի դիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է: Ո՞ր տարբերակում է սխալ նշված:

- 1) *կանաչ* – ածական 3) *դերձակ* – անձ ցույց տվող գոյական
2) *իսկ* – դերանուն 4) *տասնութ* – թվական

14. Արտագրի՛ր նախադասությունը՝ փակագծերում տրված բառերը ձևափոխելով և տեղադրելով բաց թողած տեղում:

..... հանկարծ ինձ սեղմեց կրծքին, աչքերը փակեց, կաթիլները գլորվելով ընկան:

(հայր, արցունք)

Պատասխան՝ _____
